Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցուպատմություն» առարկայի
հանրապետական փուլ
9-րդ դասարան

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ո՞վ է «Մարգարե» բանաստեղծության հեղինակը:

1) Հովհաննես Թումանյան *(0,5 միավոր)*
2) Վահան Թեքեյան
3) Վահան Տերյան
4) Եղիշե Չարենց

2. Ո՞վ է Սուրբ Սարգիս զորավարի աճյունից մի մասունք տեղափոխել Հայաստան:

1) Մովսես Խորենացի *(0.5 միավոր)*
2) Սահակ Պարթև
3) Վռամշապուհ
4) Մեսրոպ Մաշտոց

3. Ե՞րբ է նշվում Վարագա խաչի տոնը: *(0,5 միավոր)*

1) Հուլիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում
2) Սեպտեմբերի 14-ի մերձակա կիրակի օրը
3) Սեպտեմբերի 28-ի մերձակա կիրակի օրը
4) Հոկտեմբերի 23-29-ի միջև ընկած կիրակի օրը

4. Ո՞ր հայրապետն է արժանացել «Սրտերի լուսավորիչ» կոչմանը:

1) Գրիգոր Լուսավորիչ *(0,5 միավոր)*
2) Արիստակես
3) Ներսես Մեծ
4) Սահակ Պարթև

5. Ս. Գրիգոր Նարեկացին ո՞ր թվականներին է գրել «Մատյան ողբերգության» աղոթագիրքը:

1) 901-1002 թթ. *(0,5 միավոր)*
2) 1002-1003 թթ.
3) 1022-1023 թթ.
4) 2004-2005 թթ.

6. Ո՞վ է Աղթամարի կաթողիկոսությունը դարձրել Ամենայն Հայոց կաթողիկոսությանը ենթակա թեմ: ***(0,5 միավոր)***

1) Գրիգոր Տաթևացի
2) Մովսես Տաթևացի
3) Թովմա Մեծոփեցի
4) Հովհաննես Հերմոնեցի

7. Քանի՞ հոգևոր թեմերի էին բաժանվել Արևելյան Հայաստանը և հայաբնակ շրջանները՝ ըստ «Պոլոժենիե»-ի: ***(0,5 միավոր)***

1) 3
2) 4
3) 5
4) 6

8.Որտե՞ղ է գտնվել Չարխափան Ս. Աստվածածին վանքը: ***(0.5 միավոր)***

1) Վան
2) Արմաշ
3) Հաճըն
4) Կարին

№ 9-12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Հայոց եկեղեցին տարվա օրերը բաժանել է երեք հիմնական խմբերի՝ _____, սրբերի հիշատակությունների և պահքի օրեր:

(1 միավոր)

10. _____ պատմիչի վկայությամբ՝ Հռիփսիմյան կույսերի նահատակությունից հետո Տրդատը ծանր հիվանդանում է:

(1 միավոր)

11. _____ կաթողիկոսն Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում հանդիսավորությամբ Սմբատ Արծրունուն օծում է Հայոց թագավոր:

(1 միավոր)

12. 1905 թ. օգոստոսի 1-ին Հայոց եկեղեցու գույքը վերադարձնելու և ազգային դպրոցները վերաբացելու գործում վճռական դեր ունեցավ _____ կաթողիկոսը:

(1 միավոր)

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Կաթողիկոսի անունը համապատասխանեցնել իր ծննդավայրին.

(0,25 X 4 = 1 միավոր)

1. Մովսես Բ
2. Հովհաննես Գ
3. Հովհաննես Ե
4. Անանիա Ա

ա) Օձուն
բ) Դրասխանակերտ
գ) Կարս
դ) Մոկք
ե) Եղիվարդ

1	
2	
3	
4	

14. Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերին.

(0,25 X 4 = 1 միավոր)

1. Առաջին տպարանի հիմնումը Հայաստանում
2. Թղթի գործարանի հիմնումը Սիմեոն Ա Երևանցու կողմից
3. Մխիթար Սեբաստացուն է շնորհվում Ս. Ղազար կղզին
4. Մխիթար Սեբաստացին տեղափոխվում է Վենետիկի հանրապետություն

ա) 1717 թ.
բ) 1776 թ.
գ) 1703 թ
դ) 1771թ.
ե)1701 թ.

1	
2	
3	
4	

№ 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից

15. Նշված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ. ***(1 միավոր)***

ա) Հայաստանը վերաբաժանվում է Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև
բ) Վենետիկում տպագրվում է «Սաղմոսարան» գիրքը
գ) Տպագրվում է «Ուրբաթագիրքը»
դ) Կաթողիկոս է օծվում Մովսես Գ Տաթևացին
ե) Ս. Էջմիածնում գումարվում է «Տերանց Հայոց» գաղտնի խորհրդաժողովը

1	
2	
3	
4	
5	

16. Հայոց կաթողիկոսների անունները դասավորել՝ ըստ նրանց գահակալման հաջորդականության. *(1 միավոր)*

ա) Հովսեփ Հողոցմեցի
բ) Ներսես Մեծ
գ) Հովհաննես Մանդակունի
դ) Սահակ Պարթև
ե) Արիստակես Պարթև

1	
2	
3	
4	
5	

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից.

17. «Սպանման գործի արքայական այս զենքը Կյանքի Արքայի՝ Քրիստոսի խաչին նվիրյալ լինի, որով մեզ փրկեց հավիտենական մահից»:

1) Ո՞ւմ աշխատությունից է մեջբերումը: *(1 միավոր)*

_____

2) Ո՞ր արքայի սրի մասին է խոսքը: *(1 միավոր)*

_____

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ. *(1 x 2 = 2 միավոր)*

1) Հայոց, վրաց, ասորի և դպտի եկեղեցիները չընդունեցին Քաղկեդոնի ժողովի որոշումները:
2) Եփեսոսի տիեզերաժողովն ընդունեց, որ Քրիստոսի անձի մեջ անբաժանելիորեն միացած են թե՛ մարդկային և թե՛ աստվածային բնությունները:
3) Քաղկեդոնի ժողովը հաստատեց Եվտիքեսի ուսումունքը:
4) Քաղկեդոնի ժողովը չընդունեց Հիսուսի երկու բնությունների բանաձևը:
5) Արևելյան եկեղեցիների կողմից քաղկեդոնականությունն ընկալվեց որպես նեստորականության վերածնունդ:

19. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ. *(1 X 2 = 2 միավոր)*

1) Հայաստանի խորհրդայնացման շրջանում Հայոց կաթողիկոսն էր Գևորգ Ե Սուրենյանցը:
2) 1932 թ. նոյեմբերին Ս. Էջմիածնում գումարվում է ազգային-եկեղեցական ժողով:
3) 1921 թ. հունվարին Հայհեղկոմը Ս. Էջմիածնին է վերադարձնում բռնագրաված արժեքների մի մասը:
4) 1920 թ. դեկտեմբերի 17-ի Հայհեղկոմի որոշմամբ դպրոցները փակվեցին:
5) 1925 թ. Վրաստանում դադարում է գործել հայոց թեմը:

№ 20

Շարադրանք

(2 միավոր)

Ներկայացնել Հայոց Եկեղեցու դերը Հայաստանի առաջին հանրապետության տարիներին: Գնահատել եկեղեցու մասնակցությունը պետականության կառուցման գործում: